

Ասոր վարի դին դեղի պէտք եղած կամ ազնիւ տունկերուն պարտէզը կայ, որուն մէջը ան խտերէն կամ ծառերէն 'ի զատ, որոնց կամ արմատնին, կամ տերևնին, կամ ծաղիկնին ու կամ պտուղնին դեղ կըլլան, աշխրբին չորս դիէն ալ ազնիւ ծառեր, զարմանալի բնութեամբ խոտեր, ու սքանչելի ծաղիկներ ալ կան, ինչպէս, վանիլիայի, խահվէի, պիպերի, խարէմֆիլի, ու ասոնց նման օտար տեղերու ծառերը: Ա՛հնային օդը աս տեսակ տունկերուն համար շատ ցուրտ ըլլալուն՝ տասնըչորս հատ իրարմէ մեծ ձմեռոցներ շինած են՝ ապակիով գոցած, ասոնց մէջը շատ բան կրակի օգնութեամբ կըպահեն: Հոս տեղաց ասանկ տունկերուն վրայ զանազան հատոր գրքեր շինած տպած են քանի մը բնազնին հայրենասէր մարդիկ: Ա՛հնա գրեթէ օտարական մը չիգար, որ աս Շէօն պուունը չիտեսած երթայ: Միշտ բաց է, բաց 'ի անձրևոտ օրերէն:

Բ.

Ա՛հնային պոռտէ:

Վայսերական պղտիկ աւան մըն է, Ա՛հնայէն երկուք ու կէս ժամ հեռու, բայց հոս բերող թագաւորական ճամբուն երկու դին մէկզմէկու մօտ կարգով խոշոր ծառեր տնկած ըլլալով, ան երկայն

Ճամբան շուք ու զուարճալի եղած է : Արկու պա-  
 լատ կայ հոս, հին ու նոր, հինը տասնըչորսերորդ  
 դարուն շինված է, շատ պզտիկ ու անշուք է . նորն  
 ալ այնչափ փառաւոր չէ, բայց մաքուր ու սիրուն  
 է, ունի պզտիկ թէատրոն մը ու ձիւնթացքի կամ  
 ձի հեծնել սորվելու տեղ : Ասոր պարտեզը շիտակ  
 դաշտային է, իր բոլորտիքը պտըտելու համար եր-  
 կու ժամ պէտք է : Մէջը չինուամաչինի տներ, կա-  
 մուրջներ . բնական ու բնականի նմանացուցած գե-  
 տեր, լիճեր, ձկնարաններ, ծաղկնոցներ, աղվոր  
 ծառնոցներ, մարգեր (չայիր չիմէն) խոշոր տերե-  
 ունեցօղ ծառերով շուք եղած ճամբաներ ու պէս-  
 պէս զբօսանքի տեղեր կան : Չ քերուն մէջը շիտակ  
 կղզի մը շինած են, որուն մէկ դիէն նաւակով ու  
 մէկալ դիէն կամուրջով կանցնելի . ասոր վրայ  
 կայսրը բերդ մը շինել տրված է, որուն պատու-  
 հանները, դռները, ու ամէն շարժական ու անշարժ  
 բաները մէյմէկ հին շէնքերէն ժողվան են, որը 300,  
 որը 500, ու որը ալ աւելի տարւան են : Մէրմէր  
 քարերով շինած մատուռ մը կայ, որ կայսրը իրեք  
 օրւան հեռու տեղէ մը բերել տրված է, ու 800  
 տարւան շէնք է : Աերդին վրայ՝ հրացանը նոր գըտ-  
 նրված ատենները շինված հրացանները թնդանօ-  
 թի ծակերը շարած են : Մէջը հին ատենւան բան-  
 տեր ու դատաստանի տեղեր կամ տիվաններ շինած  
 են : Արի սենեակները շատ հին զէնքեր, բռնա-  
 ւորներու արձաններ, հին ապեններու զարդեր ու

սուղ բաներ շարած են : Արջապէս ամէն բանը անանկ յարմար շինված ու կարգաւորված է որ տեսնողը կը կարծէ թէ ութը ինը հազար տարւան բերդ կամ շէնք մըն է :

Ասոր երևելի տեսնելու արժանի բաներուն մէջը ժամացոյց մը կայ մեծութիւնը մէկ քառակուսի կանգունի չափ . աս ժամացոյցը հասարակ ժամերը ցըցընելէն 'ի զատ , ուրիշ լարվածք մըն ալ ունի , որն որ լարված ատենը սքանչելի տեսարան մը կը ցըցնէ : Առջևը պղտի վանդակ (պարմախլըխ) դուռ ունի , մէջը երկու դին կամարներ կան . լարվածին պէս վանդակը կը բացվի , կամարներուն մէջէն ամէն մէկ դիէն վեց վեց հատ ձիաւոր զինաւորներ կելեն , ու կըսկսին սրերով իրարու հետ կռուիլ , մէկը մէկալին կը զարնէ մեռցուցածի պէս ձիէն վար կը ձգէ . ուրիշ մի ալ իր դիմացինին շափղան իր սրին վրայ կանցընէ : Ատքը աջ դիէն ելլողները ձախ դին կերթան , ու ձախ դիէն ելլողները աջ դին կերթան , մեռելը գետինը կը մնայ . բայց իր ձին մէկալնոնց հետ մէյ տեղ ներս կերթայ : Ատքը արապ մը դուրս կելէ , ան մեռելը կը շալկէ ներս կը տանի . ասանկով հանդէսը կը լմննայ : Օրը հազար հեղ աս մասնաւոր լարվածքով լարես աս ժամացոյցը , հազար հեղ ալ նոյն տեսարանը կը լայ :